

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/3

9 հունվարի 2013թ.

Քննարկվեց Ա/Ձ Գարիկ Օհանյան 17.11.2011թ-ի բողոքը « ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 07.12.2012թ. թիվ 1102376 ստուգման ակտի դեմ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 19.10.2012թ. թիվ 2202522 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Գարիկ Օհանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ղսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 21.11.2012թ-ին կազմվել է թիվ 2202522 արձանագրությունը, որով մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

ավագ հարկային տեսուչ Արշակ Գանջալյանը 19.11.2012թ. ժամը 12:55-ին ք.Հրազդան, Զ.Անդրանիկի 188 հասցեում գործող խանութից կատարեց հսկիչ գնում 5500 դրամ ընդհանուր արժողությամբ, սակայն աշխատակիցը միայն 4500 դրամն է մուտքագրել ՀԴՄ և տրամադրել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 30.11.2012թ. թիվ 1102376 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Գարիկ Օհանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 07.12.2012թ-ին կազմվել է թիվ 1102376 ստուգման ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Հիմք ընդունելով « ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 19.10.2012թ. թիվ 2202522 հանձնարարագրով հսկիչ գնման ղսումնասիրության արդյունքում 21.11.2012թ-ին կազմված թիվ 2202522 արձանագրությունը, որով արձանագրվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի և «հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝ կիրառվել է «հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը, գումարով 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Գարիկ Օհանյանի բողոքում մասնավորապես նշված է.

Համաձայն « ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ-ի պետի 19.10.2012թ թիվ 2202522 հանձնարարագրի Ա/Ձ Գարիկ Օհանյանի մոտ կատարվել է հսկիչ գնում: Կատարված հսկիչ գնման արդյունքում խստագույնս պահպանվել են ՀԴՄ շահագործման կանոնները: Հարկային մարմնի կողմից կազմվել է համապատասխան արձանագրություն, որը տնտեսվարող սուբյեկտին չի հանձնվել: Այսինքն՝ հարկային մարմնի կողմից խախտվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի 8-րդ հոդվածի ա/ ենթակետը: Իսկ համաձայն նույն օրենքի 2-րդ հավելվածով նախատեսված 1.6 կետի, հսկիչ գնման արդյունքում կազմվում է հարկային մարմնի կողմից սահմանված ձևով արձանագրություն՝ երկու օրինակից: Արձանագրությունն ստորագրում են հսկիչ գնում կատարող անձինք և տնտեսվարող սուբյեկտի անունից ապրանքների վաճառող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողը:

Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ երան փոխարինող պաշտոնատար անձին, որն առարկություններ ունենալու դեպքում դրանք ներկայացնում է գրավոր:

Այսինքն, սույն նորմի իմպերատիվ պահանջը կայանում է նրանում, որ նշված արձանագրության մեկ օրինակը պետք է գտնվեր տնտեսվարող սուբյեկտի տրամադրության տակ, որն հնարավորություն կընձեռեր պատաշաճ կերպով ծանոթանալու կազմված արձանագրությանը և ներկայացնել համապատասխան առարկություններ: Սակայն հարկային մարմնի աշխատակիցները, ոչ միայն ինձ չեն տրամադրել թիվ 2202522 արձանագրության օրինակը, այլև համապատասխան ՀՂՄ կտրոնի հետ միասին վերցրել են իրենց տիրապետման տակ: Այսինքն, չարաշահելով իրենց իշխանական լիազորությունները և օգտվելով իմ օրենքի չիմացությունից հարկային մարմնի աշխատակիցները կոպիտ կերպով ուտնակարել են իմ իրավունքները և օրինական շահերը:

Թիվ 1102376 ակտում, հարկային մարմնի աշխատակիցների կողմից հիշատակված է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից իբր խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀՂՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջը: Իմ կողմից իրականացված գործողություններում չկա որևէ հանգամանք, ինչը կհիմնավորեր, որ կատարվել է նշված իրավախախտումը:

Բացի այդ, համաձայն «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հավվածի.

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

Այս պարագայում ինձ համար բարենպաստ փաստական հանգամանքը կայանում է նրանում, որ իմ կողմից կատարվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները կապված ՀՂՄ կտրոնի տրամադրման հետ: ՀՂՄ կտրոնը գտնվում է հարկային մարմնի տրամադրության ներքո և նրա ուսումնասիրությունից ակնհայտ կդառնա, որ իմ կողմից որևէ իրավական նորմի խախտում տեղի չի ունեցել: Խախտման փաստը պետք է առկա լինի համապատասխան արձանագրության մեջ, որը մինչ օրս ես չեմ ստացել:

07.12.2012 թ-ին կազմվել է վիճարկվող ակտի նախագիծը և նույն օրն էլ կազմվել է ակտը: Այս պարագայում ևս կարծում եմ, որ հարկային մարմնի աշխատակիցները թույլ են տվել իրավական նորմերի խախտում, այսինքն՝ ակտի նախագիծը և ակտը կազմել են միևնույն օրը, ինձ ևս մեկ անգամ զրկելով ակտի նախագծի վերաբերյալ դիրքորոշում հայտնելու հնարավորությունից: Ակտը և ակտի նախագիծը ստացել եմ փոստով նույն օրը՝ 14.12.2012թ-ին:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Գարիկ Օհանյանը խնդրում է ստուգման ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, լսելով Ա/Ձ Գարիկ Օհանյանի, վերջինիս ներկայացուցչի և ստուգման իրականացրած լանձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ստուգման ակտն ընդունվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված ՀՀ ԿԱ

ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) <Հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրության տիպային ձև>-ը բաժնում հստակ նշված են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրության (հսկիչ գնում) ընթացքում իրականացվող գործողությունները և դրա արդյունքում կազմվող արձանագրությունում արտացոլված ենթակա տվյալները (տեղեկությունները):

Շրջաբերական նամակի <Հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրության տիպային ձև>-ը բաժնում մասնավորապես նշված է, որ կատարված վճարման արժեքը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրելու դեպքում ՀԴՄ-ից դուրս է բերվում <Հ> հաշվետվությունը, չմուտքագրված գումարը մուտքագրվում է ՀԴՄ, դուրս է բերվում կտրոն և կրկին անգամ դուրս է բերվում <Հ> հաշվետվությունը:

Քննարկվող դեպքում շրջաբերական նամակով նախատեսված պահանջները չեն պահպանվել: Մասնավորապես, 21.11.2012թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2202522 արձանագրությունում վերոգրյալ գործողությունները կատարված լինելու վերաբերյալ որևէ գրառում կատարված չէ:

Բացի այդ, <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկվող դեպքում և ստուգման ակտի նախագիծը և ստուգման ակտը կազմվել են նույն օրը՝ 07.12.2012թ-ին: Այսինքն, խախտվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի հետևանքով տնտեսավարող սուբյեկտը զրկվել է ստուգման ակտի նախագիծն ուսումնասիրելու և դրա վերաբերյալ առարկություններ ներկայացնելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված հնարավորությունից:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝


ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Ձեյալ համարել << ԿԱ ՊԵԿ Հրահրանի ՏՀՏ 07.12.2012թ. թիվ 1102376 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԱՐԱՐՍԵԱՆ